Հաստատում եմ՝
Հյուսիսային համալսարանի
տնօրեն Ռ. Մակիչյան
դեկտեմբերի 2016թ.

Հաստատված է համալսարանի
գիտական խորհրդի 2016թ.
դեկտեմբերի 13-ի որոշմամբ (արձ. №19)

Կանոնակարգ
Հյուսիսային համալսարանի աշխատակիցների Էթիկայի կանոնների և վարվեցողության

I. Ընդհանուր դրույթներ

1. Հյուսիսային համալսարանի աշխատակիցների էթիկայի կանոնների և վարվեցողության կանոնակարգով սահմանվում է Հյուսիսային համալսարանի աշխատակիցների՝ համալսարանի տարածքում թույլատրելի և արգելվող գործողությունները, դրանց նկատմամբ հսկողության իրականացումը և կարգապահական պատասխանատվության ենթարկելու կարգը:
2. Սույն կանոնակարգը մշակվել է ՀՀ Սահմանադրության, ՀՀ Աշխատանքային օրենսգրքի, Համալսարանի Կանոնադրության և այլ ներքին իրավական ակտերի հիման վրա:

II. Համալսարանի աշխատակիցը պարտավոր է պահպանել էթիկայի հետևյալ կանոնները

- հարգել Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշը և պետական լեզուն,
- լինել ճշտապահ, կարգապահ, գուսպ և օրինակելի,
- համալսարանը ներկայացնելիս կամ իր իրավասությունների սահմանում համալսարանի անունից գործելիս, այլոց հետ շփումներում և գործողություններում լինել արդար և շրջահայաց,
- չպետք է անտարբել լինել այլ աշխատակիցների անգործության և սխալների նկատմամբ: Նման իրավիճակների առկայության դեպքում դրանք պետք է քննարկել տվյալ աշխատակցի հետ, իսկ արդյունքի չհասնելու դեպքում դրա մասին տեղյակ պահել նրա անմիջական ղեկավարին, ռեկտորին կամ պրոռեկտորին,
- աշխատանքային ժամերին և աշխատանքային ժամերից դուրս իր վարքագծով չնսեմացնել համալսարանի նկատմամբ հանրության վստահությունը կամ վտանգել իր աշխատանքային պարտականությունները կատարելու հնարավորությունը,
- արդար վերաբերվել գործընկերներին, ներգրավել նրանց իրենց առնչվող որոշումների կայացման մեջ, թույլ տալ արտահայտել այդ որոշումների

վերաբերյալ իրենց դիրքորոշումը, չհամաձայնվելու դեպքում հիմնավորել և հավասար հնարավորություն տալ գիտելիքների և հմտությունների զարգացման համար,

- գործընկերների հետ հարաբերություններում դրսևորել նրբանկատություն, չբարձրացնել ձայնն աշխատավայրում, չխոչնդոտել այլ անձանց կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարմանը, խնայել իր և գործընկերոջ ժամանակը,
- գործընկերոջ վերաբերյալ քննադատությունն արտահայտել միայն նրա ներկայությամբ՝ պարզաբանելով բոլոր հիմքերը, երրորդ անձանց հետ չքննարկել գործընկերոջ վարքագիծը, գործնական, մասնագիտական, անձնական հատկանիշները,
- հարգել և հայցել գործընկերների մասնագիտական կարծիքը՝ վերջիններիս իրավասության շրջանակներում և գնահատել նրանց ներդրումը,
- միշտ զգոն լինել այն իրավիճակներում, որտեղ աշխատակցի անձնական շահը կարող է հակադրվել Հյուսիսային համալսարանում իր պարտականությունների կատարման հետ,
- լինել քաղաքավարի ուսանողների, դասավանդողների, մյուս աշխատակիցների և այլ անձանց հետ շփումներում, որպես աշխատակից կողմնակալ վերաբերմունք չդրսևորել ընկերների և բարեկամների նկատմամբ,
- հարգել աշխատակիցների և ուսանողների արժանապատվությունը՝ անկախ նրա ազգությունից, սեռից, ռասայից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային, նյութական կամ այլ դրույթներից,
- բարեխղճորեն վերաբերվել մարդկանց կյանքին և առողջությանը,
- բարեխղճորեն վերաբերվել Հյուսիսային համալսարանի և մյուս աշխատակիցների գույքին,
- չոգտագործել ծառայողական պարտականությունների ընթացքում հայտնի դարձած տեղեկատվությունը՝ իր անձնական շահերի համար,
- աշխատավայրում պահպանել առողջության և ապահովության համապատասխան պահանջները՝ փորձելով վերացնել կամ անմիջական ղեկավարին տեղեկացնել իր առողջությանը կամ ապահովությանը սպառնացող ցանկացած վտանգի մասին,
- աշխատանքային հարաբերություններում պահպանել ենթակարգությունը (սուբորդինացիա),
- աշխատանքի ներկայանալ կոկիկ, գրասենյակային ոճի հագուստով,
- աշխատանքը, հանգստի ու սնվելու ընդմիջումը սկսել և ավարտել Հյուսիսային համալսարանի ներքին կարգապահակն կանոներով սահմանված ժամերին,
- պահպանել բարոյական նորմերով սահմանված էթիկայի այլ կանոններ:

Հյուսիսային համալսարանում աշխատելու ընթացքում արգելվող գործողությունները

- Հյուսիսային համալսարանի անունը կամ կապերն անձնական նպատակներով օգտագործումը,

- աշխատատեղում աշխատանքային պարտականություններից դուրս աշխատանքների կատարումը, եթե այդ աշխատանքը չի հանձնարարվել աշխատակցի անմիջական ղեկավարի կողմից կամ վերջինիս իմացությամբ,
- առանց համալսարանի ռեկտորի թույլտվության իր հետ կնքված աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումը ընկերությունում աշխատակից այլ անձի հանձնարարելը,
- Հյուսիսային համալսարանի գույքը, այդ թվում՝ աշխատանքի համար նրան տրված անհրաժեշտ գործիքները, սարքավորումները, հատուկ հագուստը փչացնելը կամ կորցնելը,
- Հյուսիսային համալսարանի ծառայողական, ապահովագրական, առևտրային գաղտնիքների հրապարակելը,
- իր գործընկերներին և պետական(ոչ պետական) այլ մարմինների աշխատակիցներին և քաղաքացիներին վիրավորանք հասցնելը,
- ֆիզիկական ուժ գործադրելը կամ վերջինիս սպառնալիքը,
- իր անմիջական աշխատատեղը, ինչպես նաև համալսարանի տարածքը աղտոտելը,
- ոգելից խմիչքների, թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի ազդեցության տակ գտնվելը,
- ծխելը՝ դրա համար չնախատեսված վայրերում,
- աշխատանքի ժամերին բջջային հեռախոսների՝ գործընկերների ուշադրությունը շեղող ազդանշանների(զանգերի) օգտագործումը,
- համակարգիչների և ինտերնետային կապի օգտագործումը՝ ոչ աշխատանքային նպատակներով:

III. Էթիկայի կանոնների նկատմամբ հսկողությունը

- Հյուսիսային համալսարանում էթիկայի կանոնների նկատմամբ անմիջական հսկողությունը կատարվում է Հյուսիսային համալսարանի կադրերի բաժնի կողմից:
- Հյուսիսային համալսարանի էթիկայի կանոնների նկատմամբ ընդհանուր հսկողություն են իրականացնում նաև համալսարանի ռեկտորը, պրոռեկտորները, անվտանգության աշխատակիցը:
- Հյուսիսային համալսարանում էթիկայի կանոնների խախտումներն արձանագրվում են նաև մյուս աշխատակիցների կողմից: Այս դեպքում խախտումը նկատող աշխատակիցն այդ մասին անմիջապես տեղեկացնում է կանոնները խախտող աշխատակցի անմիջական ղեկավարին և/կամ կադրերի բաժնի տեսուչին և/կամ ռեկտորին և/կամ պրոռեկտորներին:
- Էթիկայի կանոնների խախտման համար աշխատակիցը Հյուսիսային համալսարանի ռեկտորի, կադրերի բաժնի տեսուչի կամ աշխատակցի անմիջական ղեկավարի կողմից ենթարկվում է կարգապահական պատասխանատվության համաձայն Հյուսիսային համալսարանի ներքին կարգապահական կանոնների և այլ իրավական ակտերի:
- Սույն կանոնակարգը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից: